ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

02.04.2014թ.

12^{00} Նիստի մեկնարկ: Բացման խոսք, օրակարգի ներկայացում և հաստատում՝ մարզպետ, խորհրդի նախագահ Ա. Ղահրամանյան:

12^{15} Մասնակիցների ներկայացում ըստ համայնքների:

12^{30} Խորհրդի քարտուղարի ընտրություն (ոչ պետական հատվածից, բաց քվեարկությամբ):

13^{00} Քննարկումներ խորհրդի հետագա աշխատանքների առնչությամբ, առաջարկների ներկայացում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

02.04.2014թ. ք. Արմավիր

Մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, Խորհրդի 20 անդամներ, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը, ԶԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Նիստի մեկնարկ: Բացման խոսք, օրակարգի ներկայացում և հաստատում՝ մարզպետ, խորհրդի նախագահ Ա. Ղահրամանյան:
2. Մասնակիցների ներկայացում ըստ համայնքների:
3. Խորհրդի քարտուղարի ընտրություն (ոչ պետական հատվածից, բաց քվեարկությամբ):
4. Քննարկումներ խորհրդի հետագա աշխատանքների առնչությամբ, առաջարկների ներկայացում:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետ, Խորհրդի նախագահ Ա. Ղահրամանյանը, շնորհավորեց Խորհրդի անդամներին, ներկայացրեց նիստի օրակարգը: Այնուհետև հաստատվեց օրակարգը:

Նիստի օրակարգին համապատասխան Խորհրդի նախագահը ներկայացրեց Խորհրդի անդամներին՝ ըստ համայնքների:

Այնուհետև անցկացվեց Խորհրդի քարտուղարի ընտրություն, որն անցավ բաց քվեարկությամբ: Խորհրդի անդամների կողմից առաջարկվեցին Խորհրդի քարտուղարի երկու թեկնածություններ՝ ք. Մեծամորի ոչ պետական հատվածը ներկայացնող Արման Ավետիսյան և ք. Արմավիրի ոչ պետական հատվածը ներկայացնող Հելբերտ Ասատրյան: Բաց քվեարկության արդյունքում, ձայների մեծամասնությամբ ք. Մեծամորի ոչ պետական հատվածը ներկայացնող Արման Ավետիսյանը (Կողմ՝ 14, դեմ՝0, ձեռնպահ՝ 6) ընտրվեց Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի քարտուղար:

Իրականացվեց քննարկում խորհրդի հետագա աշխատանքների առնչությամբ և առաջարկվեց հաջորդ նիստին ներկայացնել համայնքներում երիտասարդներին առնչվող խնդիրներ և առաջարկություններ:

Խորհրդի նախագահ՝ Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝ Ա Ավետիսյան